«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 1

7 մայիսի 2014 թվականի

«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղում» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը համալսարանի Եղեգնաձորի մասնաճյուղում»** հարցը (զեկուցող՝ մասնաճյուղի տնօրեն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ս.Վ.Խաչիկյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. հաշվետու ժամանակաշրջանում մասնաճյուղում իրականացվել են ուսումնական, գիտական, կազմակերպական, մեթոդական ու հասարակական բնույթի մեծ աշխատանքներ, որոնց արդյունքում ապահովվել է մասնաճյուղի բնականոն գործունեությունը և ուսումնագիտական համակարգի անհրաժեշտ զարգացումը:

Ուսումնական գործընթացը բակալավրի կրթական ծրագրով կազմակերպվել է «Կառավարում» (այդ թվում՝ «Զբոսաշրջության կառավարում»), «Ֆինանսներ», «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)» և «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտություններով, իսկ մագիստրոսի կրթական ծրագրով՝ «Գործարար կառավարում» և «Ֆինանսներ» մասնագիտություններով՝ մայր բուհի չափանիշներին ու չափորոշիչներին համապատասխան: Բոլոր ստուգարքներն ու քննությունները առկա ուսուցման համակարգում անցկացվում են թեստային, բանավոր, թեստային-գրավոր, իսկ հեռակա ուսուցման համակարգում՝ բանավոր ձևերով: Ամփոփիչ ատեստավորումները կազմակերպվում են մայր բուհում:

2013-2014 ուսումնական տարվա ընթացքում մասնաճյուղի գործունեության մեջ կարևորվել են նոր լսարանային ֆոնդի և մի շարք ենթակառուցվածքների (արխիվ, պահեստ, դասախոսների աշխատասենյակ, ոչ տեղացի դասավանդողների գիշերելու սենյակներ) ստեղծումը, մագիստրոսի և բակալավրի կրթական ծրագրերով գործունեություն իրականացնելու լիցենզավորումը, ուսումնական գործունեության զարգացումը, գիտահետազոտական աշխատանքների իրականացումը, մայր բուհի ստորաբաժանումների հետ համագործակցության ակտիվացումը: Այդ աշխատանքների արդյունքում կարգավորվել են մասնաճյուղի ուսումնակազմակերպական և գիտահետազոտական գործընթացները, ձևավորվել

են համապատասխան ենթակառուցվածքներ, իրականացվել են կրթության որակի ապահովմանը նպաստող ընթացակարգեր:

Հաշվետու ժամանակահատվածում մասնաճյուղում դասավանդել է 30 դասախոս, որից 8-ը հիմնական հաստիքային աշխատողներ են: Մասնաճյուղի 4 դասավանդող ձևակերպվել է հայցորդ մասնաճյուղը տեղացի մասնագետներով համալրելու քաղաքականության շրջանակներում:

Ընդհանուր առմամբ, մասնաճյուղի ուսումնական, գիտական և կազմակերպական գործընթացներն իրականացվել են ՀՊՏՀ կրթական և ուսումնական ծրագրերին, սահմանված ընթացակարգերին և ընդունված կանոնակարգերին համապատասխան:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է՝**

1. **Մասնաճյուղի 2013-2014 ուսումնական տարվա ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարված աշխատանքը գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել մասնաճյուղի տնօրենին՝**
   1) մեծացնել աշխատանքները ՀՊՏՀ ֆակուլտետների, ամբիոնների և այլ ստորաբաժանումների հետ՝ ուսումնական, մեթոդական, գիտական ու կազմակերպական գործընթացների արդյունավետությունն առավել բարձրացնելու նպատակով,
   2) կատարել աշխատանքներ ուսումնագիտական միջոցառումների կազմակերպման և հետազոտության շրջանակների ընդլայնման ուղղությամբ՝ կրթության որակի բարձրացում ապահովելու նպատակով,
   3) ակտիվացնել ուսանողների և դասախոսների մասնակցությունը մասնաճյուղին վերաբերող հարցերի քննարկմանն ու որոշումների կայացմանը:

3. **Սույն որոշումը քննարկել մասնաճյուղի տնօրինության նիստում և իրականացնել միջոցառումներ նշված հանձնարարականները կենսագործելու ուղղությամբ:**

4. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին, Մ.Ն.Հարությունյանին և Գ.Ի.Վարդանյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

07.05.2014 թ.

ք. Երևան

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 2

7 մայիսի 2014 թվականի

«Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը»** հարցը (զեկուցող՝ մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Թ.Մ.Մկրտչյան, հարակից զեկուցող՝ ստուգող հանձնաժողովի անդամ, ռեկտորի օգնական, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ռ.Պ.Համբարձումյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. ֆակուլտետում 2013-2014 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ուսումնական և գիտահետազոտական աշխատանքներն իրականացվել են համալսարանի գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումներին և հանձնարարականներին համապատասխան: Դեկանատը և ամբիոնները որոշակի գործունեություն են իրականացրել ուսումնական գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու, ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների որակը բարձրացնելու ուղղությամբ:

Ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակում ուսման առաջադիմությունը ֆակուլտետում կազմել է 83,5%, առկա ուսուցման բակալավրիատում՝ 81,8%, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 80,9%, առկա

ուսուցման մագիստրատուրայում՝ 95,5% և հեռակա ուսուցման մագիստրա-տուրայում՝ 74,8%: Ըստ մասնագիտությունների ուսման առաջադիմությունը կազմել է. «Մարքեթինգ»՝ 82,8%, «Բիզնեսի կազմակերպում»՝ 80,5%, «Կոմերցիա»՝ 79,6%, «Ապրանքագիտություն»՝ 80,3%:

Ամբիոններն էական առաջընթաց են ապահովել ուսումնական գործընթացը նոր ուսումնական պլաններով և առարկայական ծրագրերով իրականացնելու, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ ու նյութեր, դասախոսությունների նյութեր պատրաստելու և հրատարակելու գործում: Բարելավվել և ժամանակակից պահանջներին են համապատասխանեցվել բակալավրական և մագիստրոսական առկա մասնագիտությունների ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը: Նշված ժամանակահատվածում ֆակուլտետի դասախոսները հրատարակել են 3 ուսումնամեթոդական ձեռնարկ, 90 գիտական հոդված, 1 դասագիրք, 2 մենագրություն:

2013-2014 ուսումնական տարում ֆակուլտետի հեռակա ուսուցման մագիտրատուրան թողարկել է առաջին շրջանավարտները: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների որոշմամբ՝ ֆակուլտետի հեռակա ուսուցման 65 մագիստրանտներ ստացել են համապատասխան մասնագիտությունների մագիստրոսի որակավորում, որոնցից 3-ը ստացել են գերազանցության դիպլոմ:

Ֆակուլտետի խորհրդի 6 և դեկանատի 29 նիստերում քննարկվել են ուսումնական, գիտական, մեթոդական, դաստիարակչական, կարգապահական և կազմակերպական բնույթի հարցեր, վերլուծվել են ֆակուլտետում իրականացվող ուսումնագիտական աշխատանքները:

Արձանագրված խնդիրներ

1) Ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի նորացման և ժամանակակից պահանջներին համապատասխանեցման հետ կապված խնդիրներ:
2) Դասավանդման որակի ու մեթոդների, ուսանողներին մատուցվող նյութի և մատուցման եղանակների հետ կապված խնդիրներ:
3) Դասախոսների տարիքային կազմի, դրանով պայմանավորված սերնդափոխության, կադրերի ընտրության հետ կապված խնդիրներ:
4) Դասախոսների բեռնվածության ոչ օպտիմալ բաշխման հետ կապված խնդիրներ:
5) Ուսումնական և արտադրական փորձառությունների կազմակերպման ու անցկացման հետ կապված խնդիրներ:
6) Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրախոսությունների որակի հետ կապված խնդիրներ:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարվածը գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել ֆակուլտետի դեկանատին՝**

1) համալսարանի գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումները քննարկել ֆակուլտետի խորհրդում և ամբիոնների նիստերում, առկա թերությունների վերաբերյալ մշակել համապատասխան միջոցառումներ՝ դրանց կատարումն իրագործելու ուղղությամբ,
2) ուշադրության կենտրոնում պահել ֆակուլտետում վարվող կադրային քաղաքականության, ամբիոնների կողմից դասախոսների ընտրության և համալրման գործընթացը՝ նախապատվություն տալով բանիմաց, ակտիվ գիտահետազոտական գործունեություն իրականացնող, մանկա-վարժական և մասնագիտական անհրաժեշտ ունակություններ ունեցող կադրերին,
3) հսկողություն իրականացնել դասալսումների գործընթացի նկատմամբ, ֆակուլտետի խորհրդում պարբերաբար քննարկել դրանց արդյունքները,
4) ամբիոններում աշխատանքներ իրականացնել մագիստրոսական խմբերում դասավանդման մակարդակն ու մատուցվող նյութի որակը բարձրացնելու և բարձրորակ դասախոսական կադրերով ապահովելու ուղղությամբ,
5) հսկողության տակ պահել դասամատյաններում ուսանողների հաճախումների և ընթացիկ ակտիվության հաշվառման ու գնահատման գործընթացը, դասաձախողման յուրաքանչյուր դեպք քննարկել դեկանատի և ամբիոնների նիստերում,
6) ակտիվացնել խնամարկուների գործունեությունը ուսանողների կարգապահական, դաստիարակչական աշխատանքների և ուսման վարձերի հավաքագրման գործընթացում,
7) խիստ հսկողություն իրականացնել առաջին և երկրորդ միջանկյալ ստուգումների անցկացման գործընթացի նկատմամբ՝ բացառելով գործող նորմատիվային պահանջներից ու կանոնադրական նորմերից շեղումները,

8) խրախուսել ուսումնամեթոդական ձեռնարկների, խնդրագրքերի, դասախոսությունների նյութերի նախապատրաստման և հրատարակման աշխատանքները,
9) ակտիվացնել ուսանողական գիտական ընկերության ֆակուլտետային խորհրդի գործունեությունը՝ առավելագույնս ներգրավելով հետազոտական աշխատանքի ունակություններով օժտված ուսանողներին և մագիստրանտներին,
10) հետևել աշխատանքային կարգապահությանը՝ խախտումների ցանկացած դեպք դարձնելով առանձին քննարկման առարկա:

3. Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնների վարիչներին՝

1) վերանայել և արդիականացնել բոլոր մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը՝ ուղղված գործատուների պահանջների և կրթություն-աշխատաշուկա կապի ամրապնդմանը,
2) մշակել և թարմացնել դասավանդվող բոլոր դասընթացների առարկայական ծրագրերը՝ միասնական մեթոդաբանությամբ և կառուցվածքով,
3) խրախուսել հայալեզու գրքերի, ուսումնական ձեռնարկների, դասախոսությունների նյութերի, խնդիրների և թեստերի ժողովածուների հրատարակումը,
4) բարձրացնել յուրաքանչյուր դասախոսի պատասխանատվությունը դասավանդման որակի բարելավման, ուսանողների ակտիվության գնահատման և անհատական աշխատանքների ղեկավարման գործում,
5) հատուկ ուշադրություն դարձնել ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի սերնդափոխության գործընթացին, ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի միջոցով համապատասխան կադրերի պատրաստման խնդրին՝ կարևորելով նրանց ոչ միայն գիտահետազոտական, այլև մանկավարժական ունակությունները,
6) ակտիվացնել գիտահետազոտական աշխատանքները, բարձրացնել գիտական հետազոտությունների մակարդակն ու որակը,

7) մշակել և կիրառել դասախոսությունների, սեմինար և գործնական պարապմունքների վարման նոր, ժամանակակից արդիական և արդյունավետ մեթոդներ,
8) մշակել ուսումնաարտադրական, գիտամանկավարժական և գիտա-հետազոտական փորձառությունների նոր ծրագրեր, պատշաճ հսկողություն իրականացնել փորձառության ընթացքի նկատմամբ,
9) անմիջական հսկողություն իրականացնել համապատասխան ակադեմիական խմբերում ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ, պարբերաբար լսել և քննարկել խնամարկուների հաղորդումները,
10) աջակցել վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողների ուսման վարձի հավաքագրման աշխատանքներին:

4. **Սույն որոշումը քննարկել ֆակուլտետի խորհրդի և ամբիոնների առաջիկա նիստերում ու ձեռնարկել համապատասխան միջոցներ նշված հանձնարարականների կատարման համար:**

5. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին, Մ.Ն.Հարությունյանին և Գ.Ի.Վարդանյանին:**

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

07.05.2014 թ.

ք. Երևան

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 3

7 մայիսի 2014 թվականի

«Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի
դեկանի հաշվետվությունը» հարցի մասին

Լսելով և քննարկելով **«Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը»** հարցը (զեկուցող՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, դոցենտ Ա.Վ.Մաթևոսյան, հարակից զեկուցող՝ ստուգող հանձնաժողովի անդամ, ռեկտորի օգնական, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ռ.Պ.Համբարձումյան)՝ գիտական խորհուրդն արձանագրում է. դեկանատը և ամբիոնները որոշակի գործունեություն են իրականացրել ուսումնական գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու, ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների որակը բարձրացնելու ուղղությամբ:

Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետն իր կազմում ներառում է 2 ամբիոն.

1. «Ֆինանսական հաշվառում» ամբիոնն ունի 14 հիմնական հաստիքային աշխատող, այդ թվում՝ 6 գիտության թեկնածու (որից 4-ն ունեն դոցենտի գիտական կոչում): Համատեղությամբ աշխատում են 5-ը, այդ թվում 2-ը՝ ներքին համատեղությամբ: Հրավիրված դասախոսներից մեկը գիտության թեկնածու է, մյուսը՝ տնտեսագիտության դոկտոր:

2. «Կառավարչական հաշվառում և աուդիտ» ամբիոնն ունի 13 հիմնական հաստիքային աշխատող, որից՝ 1 տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, 7 գիտության թեկնածու (այդ թվում 6-ն ունեն դոցենտի գիտական կոչում): Համատեղությամբ աշխատում են 5-ը, այդ թվում 1-ը՝ ներքին համատեղությամբ: Հրավիրված դասախոսներից 3-ը գիտության թեկնածուներ են:

Ֆակուլտետի երկու ամբիոններն էական առաջընթաց են ապահովել ուսումնական գործընթացը նոր առարկայական ծրագրերով իրականացնելու, ուսումնական և ուսումնամեթոդական ձեռնարկներ ու նյութեր, դասախոսության տեքստեր պատրաստելու և հրատարակելու գործում: Բավական աշխատանք է

կատարվել բակալավրիատում 1-ին և 2-րդ ստուգումների որակը բարձրացնելու և սխալները բացառելու ուղղությամբ:

Նույն ժամանակաշրջանում ֆակուլտետի ամբիոնների աշխատակիցները հրատարակել են 1 ուսումնական ձեռնարկ, 15 գիտական հոդված, որից 1-ը՝ միջազգային ամսագրում:

Ֆակուլտետի խորհրդի 8 և դեկանատի 7 նիստերում քննարկվել են ուսումնական, գիտական, մեթոդական, դաստիարակչական, կարգապահական և կազմակերպական բնույթի հարցեր, գիտական խորհրդի հանձնարարականներ, վերլուծվել են ֆակուլտետում իրականացվող ուսումնագիտական աշխատանքները:

Ընթացիկ ուսումնական տարվա առաջին կիսամյակի ամփոփիչ քննաշրջանի արդյունքներով ուսման առաջադիմությունը ֆակուլտետում կազմել է. առկա ուսուցման բակալավրիատում՝ 74,1%, այդ թվում պետպատվերի համակարգում սովորողներինը՝ 86,4%, վճարովի համակարգում սովորողներինը՝ 72,9%, առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 90,8%, այդ թվում պետպատվերի համակարգում սովորողներինը՝ 100%, վճարովի համակարգում սովորողներինը՝ 85,9%: Ըստ կուրսերի ուսման առաջադիմությունն առկա ուսուցման բակալավրիատում կազմել է. «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)» մասնագիտության 1-ին կուրսում՝ 65,6%, 2-րդ կուրսում՝ 68,4%, 3-րդ կուրսում՝ 61,7%, 4-րդ կուրսում՝ 97,3%, (ընդամենը՝ 75,1%), «Աուդիտ» մասնագիտացման 1-ին կուրսում՝ 66,6%, 2-րդ կուրսում՝ 66,6%, 4-րդ կուրսում՝ 93,9% (ընդամենը՝ 75,7%), «Տնտեսագիտական վերլուծություն» մասնագիտացման 1-ին կուրսում՝ 53,5%, 2-րդ կուրսում՝ 80,9% (ընդամենը՝ 65,3%):

Առկա ուսուցման մագիստրատուրայում ուսման առաջադիմությունը «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)» մասնագիտության 1-ին կուրսում կազմել է 83,3%, 2-րդ կուրսում՝ 95,0% (ընդամենը՝ 88,6%), իսկ «Աուդիտ» մասնագիտացման 1-ին կուրսում կազմել է 86,3%, 2-րդ կուրսում՝ 100% (ընդամենը՝ 93,02%):

Ուսման առաջադիմությունն անհամեմատ ցածր է հեռակա ուսուցման համակարգում: 2013-2014 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ամփոփիչ քննաշրջանի արդյունքներով՝ ուսման առաջադիմությունը ֆակուլտետում կազմել է. հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 42,2%, հեռակա ուսուցման մագիստրատուրայում՝ 77,2%: Հեռակա ուսուցման բակալավրիատում ուսման առաջադիմությունը ըստ կուրսերի կազմել է. «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)» 1-ին կուրսում՝ 45,4%, 2-րդ կուրսում՝ 32,3%, 3-րդ կուրսում՝ 34,6%, 4-րդ կուրսում՝ 17,8%, 5-րդ կուրսում՝ 55,1% (ընդամենը՝ 44,0%) իսկ «Աուդիտ» 1-ին կուրսում՝ 40,0%, 2-րդ կուրսում՝ 77,7%, 4-րդ կուրսում՝ 73,9% (ընդամենը՝ 63,9%): Հեռակա ուսուցման մագիստրատուրայում ուսման առաջադիմությունն ըստ կուրսերի կազմել է. «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)» 1-ին կուրսում՝ 66,6%, 2-րդ կուրսում՝

71,4% (ընդամենը՝ 68,0%), «Աուդիտ» 1-ին կուրսում՝ 88,5%, 2-րդ կուրսում՝ 76,1% (ընդամենը՝ 83,9%):

Ֆակուլտետում 2013-2014 ուստարվա 1-ին կիսամյակում հեռակա մագիստրատուրայի ամփոփիչ ատեստավորմանը մասնակցել են 74 ուսանողներ, որոնցից 2-ը՝ երկտարեցի, իսկ ամփոփիչ ատեստավորման դրական շեմը չեն հաղթահարել 5 ուսանողներ կամ մասնակիցների 6,75%-ը:

Համալսարանից հաշվետու տարում հեռացվել է ֆակուլտետի 10 ուսանող, որից 2-ը՝ առկա ուսուցման բակալավրիատից, 2-ը՝ առկա ուսուցման մագիստրատուրայից, 3-ը՝ հեռակա ուսուցման բակալավրիատից և 3-ը՝ հեռակա ուսուցման մագիստրատուրայից: Ֆակուլտետի ուսանողների 91,19%-ը սովորում է վճարովի ուսուցման համակարգում:

Ֆակուլտետում կրեդիտային համակարգի շրջանակներում մինչև 12 կրեդիտ պարտքով փոխադրված ուսանողները 47-ն են, այդ թվում՝ առկա ուսուցման բակալավրիատում՝ 22, առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 0, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 25 և հեռակա ուսուցման մագիստրատուրայում՝ 2 ուսանողներ:

2012-2013 ուսումնական տարում ֆակուլտետի վճարովի ուսուցման համակարգի ուսանողներից ֆինանսավորում են ստացել. Հայաստանի երիտասարդական հիմնադրամից՝ 13, «ԱՄՔՈՐ» կազմակերպությունից՝ 3, ՀՕՖ-ից՝ 2 ուսանողներ:

2013-2014 ուստարվա համար Հայաստանի երիտասարդական հիմնադրամ են դիմել 21 ուսանող, որից մասնակի ֆինանսավորում են ստացել 12-ը: 2013-2014 ուստարում ՀՕՖ-ից ֆինանսավորում են ստացել 4, ՀՀ կրթության և գիտության նախարարությունից՝ 5, Բրիտանական հիմնադրամից՝ 1, ՎիվաՍելից՝ 5 ուսանողներ:

2013-2014 ուսումնական տարվա առաջին կիսամյակում ֆակուլտետում սովորող 92 ուսանողների ուսման վարձը զեղջվել է, մասնավորապես՝ առկա ուսուցման բակալավրիատում՝ 42, առկա ուսուցման մագիստրատուրայում՝ 10, հեռակա ուսուցման բակալավրիատում՝ 20 և հեռակա ուսուցման մագիստրատուրայում՝ 21 ուսանողների:

Ֆակուլտետի 2 ամբիոններում սովորում են 8 ասպիրանտ (3-ը՝ առկա ուսուցմամբ, 5-ը՝ հեռակա ուսուցմամբ) և 5 հայցորդ: 2013-2014 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում ատենախոսություն է պաշտպանել 6 հայցորդ:

Միաժամանակ, առկա են որոշակի թերություններ և բացթողումներ ուսումնական գործընթացի կազմակերպման, կրթության որակի բարելավման, կրթության նոր մեթոդների կիրառման, ինչպես նաև գիտահետազոտական աշխատանքների կատարման գործում: Այսպես՝ դեռևս բավարար մակարդակի վրա չէ գործնական, լաբորատոր պարապմունքների և ուսանողների հետ կատարվող անհատական աշխատանքների որակը: Միևնույն ժամանակ, ամբիոնները

դասախոսությունների, գործնական և լաբորատոր պարապմունքների անցկացման ժամանակ դեռևս ամբողջությամբ չեն հիմնվում ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառման վրա:

Խնդիրները

1) Լսարանային խնդիրը:
2) Ամբիոնների գիտական և հետազոտական գործունեության ակտիվացում:
3) Ուսումնական պլանների արդիականացում՝ դրանք առավելապես հարմարեցնելով գործատուների ժամանակակից պահանջներին: Առարկաների անվանումների հստակեցում:
4) Խորհրդակցությունների արդյունքներով հանձնարարականների կատարման արդյունավետության բարձրացում:
5) Դասավանդող կադրերի որակի բարձրացում:
6) Դասալսումների արդյունքների քննարկում:
7) Դասավանդման որակի ու մեթոդների հետ կապված խնդիրներ:
8) Ուսումնական և արտադրական փորձառությունների կազմակերպման ու անցկացման հետ կապված խնդիրներ:
9) Ուսման առաջադիմության բարձրացմանը խոչընդոտող գործոններ, որոնցից կարևորել ենք քոլեջներից ընդունվողների և զինվորական ծառայությունից վերադարձողների առարկայական տարբերությունների արդյունքում ձևավորվող ցածր առաջադիմությունը, որն էլ իր բացասական դրսևորումն է ունենում ֆակուլտետի ընդհանուր առաջադիմության վրա:
10) Գործատուների հետ ուսանողներին աշխատանքի տեղավորելու գործընթացի արդյունավետության բարձրացումը և համագործակցության ընդլայնումը:
11) Ֆակուլտետի միջազգայնացմանն ուղղված միջոցառումների շարունակումը:

Ելնելով վերոնշյալից՝ գիտական խորհուրդը **որոշում է.**

1. **Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի ուսումնական և գիտահետազոտական աշխատանքների մասին հաշվետվությունն ընդունել ի գիտություն և կատարվածը գնահատել բավարար:**

2. **Հանձնարարել ֆակուլտետի դեկանատին և ամբիոններին՝**

1) համալսարանի գիտական խորհրդի և ռեկտորատի որոշումները քննարկել ֆակուլտետի խորհրդում և ամբիոնների նիստերում, առկա թերությունների վերաբերյալ մշակել համապատասխան միջոցառումներ՝ դրանց կատարումն իրագործելու ուղղությամբ,
2) բարձրացնել խորհրդակցությունների արդյունքներով հանձնարարականների կատարման արդյունավետությունը,
3) բարձրացնել ամբիոնների գիտական և հետազոտական գործունեության արդյունավետությունը և աշխատանքներ իրականացնել մագիստրոսական խմբերում դասավանդման որակի բարելավման, բարձրորակ դասախոսական կադրերով ապահովելու ուղղությամբ,
4) հատուկ ուշադրություն դարձնել ամբիոնների պրոֆեսորադասախոսական կազմի սերնդափոխության՝ ասպիրանտուրայի և դոկտորանտուրայի միջոցով համապատասխան կադրերի պատրաստման խնդրին՝ կարևորելով նրանց ոչ միայն գիտահետազոտական, այլև մանկավարժական ունակությունները,
5) բարձրացնել յուրաքանչյուր դասախոսի պատասխանատվությունը դասավանդման որակի բարելավման, ուսանողների ակտիվության գնահատման և անհատական աշխատանքների կազմակերպման գործում,
6) շարունակել դասախոսությունները, գործնական և լաբորատոր պարապմունքները ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործմամբ իրականացնելու գործընթացը,
7) հսկողություն իրականացնել դասալսումների գործընթացի նկատմամբ, ֆակուլտետի խորհրդում պարբերաբար քննարկել դրանց արդյունքները,
8) հետևողական աշխատանք իրականացնել դասամատյաններում ուսանողների հաճախումների և ընթացիկ ակտիվության հաշվառման ու գնահատման գործընթացների վերահսկման ուղղությամբ, դասաձախողման յուրաքանչյուր դեպք քննարկել դեկանատի և ամբիոնների նիստերում,

9) արդիականացնել բոլոր մասնագիտությունների և մասնագիտացումների ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը՝ բացառելով դասընթացների և մատուցվող նյութի բովանդակության որևէ կրկնություն ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում,
10) ուսանողների փորձառության արդյունավետության բարձրացման նպատակով, հատուկ ուշադրություն դարձնել դրա անցկացման վայրի

ընտրության և ուսումնասիրությունների ընտրված ուղղությանը վերջինիս համապատասխանության հարցին,

11) հատուկ ուշադրություն դարձնել ամբիոններում կատարվող գիտահետազոտական աշխատանքներին՝ բարձրացնելով դրանց մակարդակը և ակտիվացնել համագործակցությունը «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետ,
12) շարունակել ֆակուլտետի միջազգայնացմանն ուղղված աշխատանքները,
13) գործատուների հետ համագործակցության շրջանակներում մշակել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմատիկա և սերտ համագործակցել ուսանողներին աշխատանքի տեղավորելու հարցում,
14) ակտիվացնել ուսանողական գիտական ընկերության ֆակուլտետային խորհրդի գործունեությունը՝ առավելագույնս ներգրավելով հետազոտական աշխատանքի ունակություններով օժտված ուսանողներին և ասպիրանտներին,
15) խթանել ուսումնամեթոդական ձեռնարկների, խնդրագրքերի, դասախոսությունների տեքստերի նախապատրաստման և հրատարակման աշխատանքները,
16) հետևել աշխատանքային կարգապահությանը՝ խախտումների ցանկացած դեպք դարձնելով առանձին քննարկման առարկա,
17) հետևել վճարովի ուսուցման համակարգում սովորող ուսանողների ուսման վարձի գանձումների ընթացքին:

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

3. **Սույն որոշումը քննարկել ֆակուլտետի խորհրդի և ամբիոնների նիստերում ու ձեռնարկել համապատասխան միջոցներ նշված հանձնարարականները իրականացնելու համար:**

4. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել պրոռեկտորներ Պ.Ա.Քալանթարյանին, Մ.Ն.Հարությունյանին և Գ.Ի.Վարդանյանին:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

07.05.2014 թ.
ք. Երևան

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 4

7 մայիսի 2014 թվականի

Միացյալ ամբիոնի անվանման մասին

Ի կատարումն Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 25-ի նիստի (արձանագրություն N 8)՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի կազմակերպական կառուցվածքում փոփոխություններ կատարելու մասին» որոշման, գիտական խորհուրդը՝ լսելով և քննարկելով **«Միացյալ ամբիոնի** (կոմերցիայի և բիզնեսի կազմակերպման ամբիոններ) **անվանման մասին»** հարցը (զեկուցող՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Կ.Լ.Աթոյան),

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **Միացյալ ամբիոնն անվանել կոմերցիայի և բիզնեսի կազմակերպման ամբիոն:**

2. **Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հուլիսի 1-ից:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

07.05.2014 թ.

ք. Երևան

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհուրդ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 5

7 մայիսի 2014 թվականի

Կրեդիտային համակարգով հեռակա ուսուցման բակալավրիատում ավարտական աշխատանք գրելու թույլտվության ստորին շեմ սահմանելու մասին

Լսելով և քննարկելով **«Կրեդիտային համակարգով հեռակա ուսուցման բակալավրիատում ավարտական աշխատանք գրելու թույլտվության ստորին շեմ սահմանելու մասին»** հարցը (զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Պ.Ա.Քալանթարյան)՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. **Կրեդիտային համակարգով հեռակա ուսուցման բակալավրիատում ավարտական աշխատանք գրելու թույլտվության ստորին շեմ սահմանել 71,0 ՄՈԳ-ը (միջին որակական գնահատական):**

2. **Սույն որոշման կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Ա.Քալանթարյանին:**

3. **Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:**

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

07.05.2014 թ.

ք. Երևան

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2014 թվականի մայիսի 7-ի նիստի N 6 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում օտարերկրացի ուսումնառողների ուսումնական գերծընթացի կազմակերպման և գիտելիքների գնահատման կարգը» քննարկելու և հաստատելու մասին հարցը:**

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Պ.Ա.Քալանթարյան:**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-Դոցենտներ Խ.Ա.Մխիթարյանը, Գ.Մ.Տերտերյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաստատել **«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում օտարերկրացի ուսումնառողների ուսումնական գերծընթացի կազմակերպման և գիտելիքների**

գնահատման կարգը» (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ՝ միաձայն):

Գիտական խորհրդի նախագահ **Կ. Լ. Աթոյան**

Գիտական խորհրդի քարտուղար **Ն. Հ. Դարբինյան**

07.05.2014 թ.

ք. Երևան

ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄ • ՓՈՐՁ • ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ